ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2/2.5-24

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. հունվարի 18-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում՝ առնվազն 50 անձ»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Աշոտյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Մ.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի օգնական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- մրցույթի արդյունքների ամփոփում:

Լսեցին

Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» 2024 թվականի ծրագրի շրջանակներում հայտարարված կազմակերպությունների ընտրության մրցույթի գործընթացը իրականացվել է armeps.am համակարգի միջոցով:

Նշվեց, որ

1. Armeps.am համակարգի միջոցով Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում՝ առնվազն 50 անձ»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացվել է 6 (մեկ) հայտ՝

- «Բաքեթ Լիսթ Տուրս» ՍՊԸ-ի,
- «ՎԻԶԱՐՄ ԹՐԵՎԵԼ» ՍՊԸ-ի,
- «ՀԷՅԷՄ.ԹՐԵՎԼ» ՓԲԸ-ի,
- «Էլիտար» ՍՊԸ-ի,
- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի,
- «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի կողմից:

2. Armeps.am համակարգի միջոցով հանձնաժողովի անդամների գնահատման արդյունքում Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում՝ առնվազն 50 անձ»** միջոցառման իրականացման նպատակով ներկայացված թվով 5 (հինգ) կազմակերպությունների՝

- «Բաքեթ Լիսթ Տուրս» ՍՊԸ-ի,
- «ՎԻԶԱՐՄ ԹՐԵՎԵԼ» ՍՊԸ-ի,
- «ՀԷՅԷՄ.ԹՐԵՎԼ» ՓԲԸ-ի,
- «Էլիտար» ՍՊԸ-ի,
- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի

կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում մրցույթի հրավերի 2.4. կետի պահանջներին:

Մասնավորապես՝

- «Բաքեթ Լիսթ Տուրս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի տեխնիկական բաժնի՝ ճանաչողական այցերի իրականացման ծախսերի նախահաշվի հաշվարկներում առկա են անճշտություններ,
- «ՎԻԶԱՐՄ ԹՐԵՎԵԼ» ՍՊԸ-ի և «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի կողմից որոշ փաստաթղթեր ներբեռնված չեն,
- «ՀԷՅԷՄ.ԹՐԵՎԼ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որոշ փաստաթղթեր ստորագրված չեն,
- «Էլիտար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրագիրը ոչ լիարժեք է:

Մեկի՝

- «Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը համապատասխանում է մրցույթի համար սահմանված չափորոշիչներին:

Որոշեցին՝

Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Մերժել** հրավերի պահանջներին չհամապատասխանող փաստաթղթեր ներկայացրած թվով 5 (հինգ) կազմակերպությունների՝

- «Բաքեթ Լիսթ Տուրս» ՍՊԸ-ի,
- «ՎԻԶԱՐՄ ԹՐԵՎԵԼ» ՍՊԸ-ի,
- «ՀԷՅԷՄ.ԹՐԵՎԼ» ՓԲԸ-ի,
- «Էլիտար» ՍՊԸ-ի,
- «ԱՐԱՐԱ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը:

2. Հաղթող ճանաչել Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում՝ առնվազն 50 անձ»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝ **«Կավկասուս Հոլիդեյս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:**

3. Կնքել համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Ճանաչողական այցերի կազմակերպում՝ առնվազն 50 անձ»** միջոցառման իրականացման համար՝

- **«Կավկասուս Հոլիդեյս» ՍՊԸ-ի** հետ՝ **69.660.000** (վաթսունինը միլիոն վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ (այդ թվում՝ 11.610.000 (տասնմեկ միլիոն վեց հարյուր տաս հազար) ՀՀ դրամ ԱԱՀ) գումարի չափով:

3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան
(հանձնաժողովի նախագահ) -

Ս.Ասլիզադյան -

Ս.Հովհաննիսյան -

Հ.Սահակյան -

Լ.Աշոտյան -

Մ.Հակոբյան -

Շ.Հովսեփյան -